ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 220-Ն

28 հուլիսի, 2020 թվական

ՊԱՐԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N 104 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշմամբ՝ Պարետի 2020 թվականի հունիսի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման նպատակով պոլիմերազային շղթայական ռեակցիայի (ՊՇՌ) մեթոդով լաբորատոր հետազոտություններ իրականացնելու մասին» N 104 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումը.

1. 7-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«7. Արտակարգ դրության ժամանակ կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման նպատակով Առողջապահության նախարարի ցուցումով սահմանված ՊՇՌ հետազոտություններ իրականացնող լաբորատորիաներում դիտարկումներ (այդ թվում՝ որակի արտաքին հսկողություն) իրականացնելու համար ստեղծել մասնագիտական խումբ՝ հետևյալ կազմով.

1) ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին (3 մասնագետ),

2)ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն (2 մասնագետ),

3)ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ (2 մասնագետ)»:

2. 7-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7.1-րդ կետով.

«7.1. Որակի արտաքին հսկողության իրականացման ընթացակարգային կանոնները սահմանվում են ՀՀ առողջապահության նախարարի ցուցումով»:

3. 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին.

1) ապահովել սույն որոշման 1-ին և 9-րդ կետերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը.

2) ապահովել սույն որոշման 7-րդ կետի կատարումն ու կազմակերպումը և շաբաթական պարբերականությամբ դիտարկումների արդյունքների ներկայացումը Պարետատուն»:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 28/07/20 16:18:12 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ